=408=

388(062)(47.925)

Հ. Ս. Խ. Հ.

„ԱՎԱՏՈՒՐ“ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1931

22 NOV 2017

Հրատարակված ՀՍԽՀ ժողկոմխորհի կողմից 1928 թ. 5 հոկտեմբերի (Արձանագրություն № 27 § 1

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԱՎՏՈՄՈԲԻԼԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՑԵՎ Հ.Ս.Խ.Հ.-Ի ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԲԱՆԿԱՎՈՐՄԱՆ ԿԱՊԱՐԱՄԱՐՏՈՒՄ ԱՆԵՐԻՊՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՄԱՏՈՒՄԱՆ

1. Ընդհանուր դրույթներ

§ 1. [illegible] ուսումնասիրելու [illegible] ժամանակվա [illegible] Հանրապետության [illegible] կոմունիստական կուսակցության [illegible] Համար կոմունիստական կուսակցության կողմից հաստատված «Ավտոդպրոց» ան-

կերությունը նպատակ է դրել հիմնորեն խորացնելու ավտոմոբիլային Տեղական Տրանսպորտի և այլ տեսակի մեխանիկական միջոցների հաղորդակցության դաղափարը և նոր ձևով կազմակերպելու և բարելավելու համար։

§ 2. § 1-ում ցույց տրված նպատակի իրագործման համար՝ ընկերությանը հետևյալ իրավունքներն է տրվում.

ա) Հ.Ս.Խ.Հ.-ի սահմաններում կազմակերպել բաժանմունքներ և կոլեկտիվներ։

բ) Ավտոտրանսպորտի և ճանապարհային գործի գիտելիքները, մասսաների մեջ տարածել, խմբական պարապմունքների, դրուցցների, զեկուցցների հրապարակային վիճաբանությունների, միտինգների, եկսկուրսիաների միջոցով։

գ) Հրատարակել լրագրեր, գրքեր, բրոշյուրներև այլն։

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱՐԱՆ
1-31589

դ) Ընկերության անդամներին ուսուցանել, թե ինչպես վարվել մեքենայի հետ և նրան կառավարել։

յե) Ավտոմեքենաների, մոտոցիկլետների, մոտորների և նրանց հատուկ զանազան պարագաների պահանջը հայտնաբերել։

Աջակցել խորհրդային ավտոմոբիլային, մոտոցիկլետային և մոտորոկառուցման արդյունաբերության զարգացմանը։

ե) Աջակցել ճանապարհների շինարարության և ճանապարհային արդյունաբերության զարգացմանը։

ը) Աջակցել մատակարարման և արդյունաբերության վաճառման կազմակերպելու գործին։

թ) Աջակցել ավտոտրանսպորտի և ճանապարհի գործին հատուկ զանազան մասնագետների կադրերի ստեղծման գործին։

ժ) Կազմակերպել գիտական հիմնարկներ, աջակցել հետախուզիչ աշ-

խատանքներին և նմանապես խրախուսել գիտական հետազոտություններին և գյուտերին, ավտոմատորաբանապորտի և ճանապարհային գործի բնագավառում:

ի) Ավտոտրանսպորտի և ճանապարհային գործի զարգացման համար կազմակերպել, ցուցահանդեսներ, համաձայնություններ և խորհրդակցություններ:

լ) Ոժանդակել մոտոսպորտին (ավտոմոբիլային, մոտոցիկլետային և մոտոլիչային) կազմակերպելով փորձեր, մրցություն վարչի միջոցով:

խ) Մասնակցել ավտոմեքենային, մոտորի և նյութերի ներմուծման պլանի մշակման:

ծ) Մասնակցել ավտոմոբիլային ճանապարհների անտեսության և կոմունալ ավտոտրանսպորտի (ավտոբուսային և տակսոմոտորային ցեբ-

թնվեկությունն) կազմակերպման գործին:

§ 3. Ընկերությունը ոգտվում է իրավաբանական անձին հատուկ իրավունքներով և կարող է յուր դրամական միջոցներն ունենալ՝ սեփականություն ձեռք բերել, ամեն տեսակի գույք, որենքով վերցնել իրեն պատկանյալ գույքը, դրավ դնել կամ վաճառել, պայմաններ կնքել, համաձայնություն կայացնել, ամեն տեսակի պարտավորություններ ընդունել, վարոնց թվում և մուրհակներ տալ, պատասխանում հայց հարուցել և պատասխանել, որենքով նախատեսված կարգի սահմաններում կամավոր կերպով դրամ հավաքել, նվիրատվության մասնակցել և ընդհանրապես կատարել ընկերության գործունեությանը հատուկ իրավաբանական բոլոր գործողություններ:

§ 4. Ընկերությունը ունի հատուկ

կնիք յուր անունը վրան փորագրված։

§ 5. Ընկերության գործունեությունը տարածվում է Հ.Ս.Խ.Հ.-ի սահմաններում։

§ 6. Ընկերությանը իրավունք է տրվում բաժանմունքներ բաց անելու Հ.Ս.Խ.Հ.-ի փորոչ շրջանում, ընկերության նպատակներն իրագործելու համար։

2. Ընկերության կազմը և նրա անդամների իրավունքներն ու պարտականությունները

§ 7. «Սվոռոզոր» ընկերության անդամ կարող են լինել 18 տարեկան հասակ ունեցող այն բոլոր քաղաքացիները, վորոնք ոգտվում են ձայնի իրավունքով և յենթարկվում ընկերության կանոնադրությանը և մուծում են անդամավճար՝ և նույնպես պետական հիմնարկներ ու ձեռնարկները, կոոպերատիվ պրոֆեսիոնալ և այլ հասարակական կազմակերպությունները։

§ 8. Ընկերության մեջ մտնող անդամները անմիջապես մուծում են մուտքի վճար և բացի այդ յուրաքանչյուր տարի անդամավճար՝ հետևյալ չափերով.—

ա) Ֆիզիկական անձերը վճարում են 1 ռ.

Ծանոթ.— Կարմիր բանակայիները և նույնպես թոշակավոր ուսանողները, վորպես անդամավճար մուծում են 50 կ. իսկ մուտքի վճարից ազատ են։

բ) Նախնական կոլեկտիվներն ու կոոպերատիվները 25 ռ.

գ) Ձեռնարկները, հիմնարկներն ու կազմակերպությունները 100—500 ռ. ըստ իրենց կարողության չափի։

Ծանոթ.—Մուտքի վճայի չափը հավասար է անդամավճարին։

§ 9. Ընկերության յուրաքանչյուր անդամ պարտավոր է ակտիվ կերպով մասնակցելու նրա աշխատանքներին, աջակցելու նրա գաղափարների ու նախաձեռնություններին տարածմանը, հասարակության լայն խավերի մեջ, միաժամանակ ձգտելով գրավել նոր անդամներ:

Ծանոթ.— Պետական հիմնարկները, կոոպերատիվ, պրոֆեսիոնալ և հասարակական կազմակերպությունները ընկերության աշխատանքներին մասնակցում են իրենց ներկայացուցիչների միջոցով:

§ 10. Ընկերության անդամները ժողովներին և խորհրդակցություններին վճռական ձայն ունեն և նույնպես իրավունք, ընկերության վարչության մարմինների մեջ, թե ընտրելու և թե ընտրվելու:

§ 11. Ընկերության անդամներին անդամագրքույկ է տրվում:

§ 12. Ընկերության կազմից անդամների դուրս գալը, տեղի չի ունենում անձնական դիմումով, կամ ընկերության համագումարի կողմից վարչված ժամկետին անդամավճարը չվճարելու դեպքում, յերբ յերևան են հանվում արատավորիչ անդամի կողմից ընկերությանն արատավորող վարմունք, կամ քրեական կարգով հետապնդվող վարքե գործողություն:

3. Ընկերության միջոցները

§ 13. Դրամարկղի միջոցները կազմում են՝ ա) մուտքի և անդամավճարի վճարներից, բ) դույքի մուտքի յեկամուտից, դասախոսություններից, եքսկուրսիաների, կանոնադրությամբ նախատեսված ընկերության այլ գործողությունից, գ) պետական և հասարակական կազմակերպություններից և նույնպես այլ յեկամուտներից:

§ 14. Ընկերության միջոցների

ծախսումը, տեղի չե ունենում ըստ տարեկան նախահաշվի և հրահանգի, հաստատված ընկերության խորհրդի կողմից:

§ 15. Այն գումարները, որոնք հատուկ կոչում ունեն և առանձնացված են նվիրատուի հայտարարության համաձայն, կամ այլ չարժառիթներով և պատճառաբանությամբ, այլ նպատակների համար ծախսման յենթակա չեն:

4. Ընկերության վարիչ մարմինները

§ 16. Հ. Ս. Խ. Հ.-ի «Ավտոդոր» ընկերության կենտրոնական վարչության մարմինները կազմում են.—

ա) Ընկերության համահայաստանյան համագումարը,

բ) Ընկերության խորհուրդը, որը պիտի Յերևանում լինի,

գ) Ընկերության խորհրդի նախագահությունը:

§ 17. «Ավտոդոր» ընկերության համահայաստանյան համագումարը ընկերության վարչության գերագույն մարմինն է հանդիսանում:

Ընկերության համագումարները լինում են ա) հերթական. հրավիրվում է ընկերության խորհրդի կամ նախագահության նախաձեռնությամբ, վոչ ավելի քան տարեկան մեկ անգամ և բ) արտակարգ, որը հրավիրվում է վերստուգիչ հանձնաժողովի պահանջմամբ, կամ ընկերության տեղական կազմակերպությունների վոչ սակավ քան 1/3 մասի գրավոր հայտարարությամբ:

Հրավիրման ժամանակը, ներկայացուցչության նորման, համագումարի օրակարգը, վորոշվում է ընկերության խորհրդի կողմից և այդ մասին հրատարակվում է Հ. Ս. Խ. Հ.-ի կենտգործկոմի պաշտոնական որդանում

վոչ ուշ քան մեկ ամիս մինչեվ համագումարի գումարվելը:

§ 18. «Ավտոդոր» ընկերության համահայաստանյան համագումարի անելիքների մեջ մտնում են:

ա) Ընկերության խորհրդի, վերաստուգիչ հանձնաժողովի հաշվետվությունների և գնահատումների վերաքննությունը և հաստատումը:

բ) Վերանայում այն խնդիրների, որոնք վերաբերվում են ընկերության կանոնադրության փոփոխումներին և լրացումներին:

գ) Ընկերության խորհրդի և վերաստուգիչ հանձնաժողովի ընտրությունները:

դ) Ընկերության գործերին վերաբերյալ այն բոլոր խնդիրների լուծումը, որը համահայաստանյան համագումարի որոշմամբ, նրա իրավասության կհատկացվեն:

Ծանոթ.— Համագումարում բոլոր խնդիրները վճռվում են

ձայների հատուկ մեծամասնությամբ:

§ 19. «Ավտոդոր» ընկերության խորհուրդը, ընտրվում է ընկերության համահայաստանյան համագումարում վարչ թիվ անդամներով, մի ժամանակամիջոցի համար, որը որոշում է նույն համագումարը:

Ծանոթ.— Մինչև ընկերության 1-ին համահայաստանյան համագումարը, ընկերության կանոնադրության հաստատումից հետո, հրավիրվում է հիմնադիր ժողով, որը և ընտրում է ժամանակավոր՝ խորհուրդ:

§ 20. Ընկերության համահայաստանյան համագումարի ընդմիջումների ընթացքում, խորհուրդը հանդիսանում է, որպես գերագույն ղեկավարող մարմին, «Ավտոդոր» ընկերության:

§ 21. Ընկերության խորհուրդը

կյանքը մեջ իրագործում է համա-
հայաստանյան համագումարի վորո-
շումները և նրան յենթակա յեն՝

ա) Խորհրդի նախագահության գործունեության ղեկավարությունը,

բ) Խորհրդի նախագահության հաշվետվությունների վերանայելն ու հաստատելը:

գ) Ընկերության աշխատանքների ֆինանսական ծրագրերի հաստատումը, առաջիկա տարվա համար, նամանապես և հսկողություն վերոհիշյալ պլանների և ծրագրերի իրագործման վերաբերմամբ:

դ) Նրան է պատկանում «Ավտոդոր» ընկերության ներկայացուցչությունը այլ հիմնարկությունների և կազմակերպությունների հետ հարաբերությունների դեպքում:

§ 22· «Ավտոդոր» ընկերության խորհուրդը, հրավիրվում է նրա նախագահության նախաձեռնությամբ, կամ թե չէ խորհրդի անդամների վոչ

պակաս քան 1/2 մասի դրավոր հայտարարությամբ, կամ թե չէ վերատուգիչ հանձնաժողովի պահանջմամբ, վոչ ավելի քան տարեկան 2 անգամ:

§ 23· Խորհրդի անդամները՝ իրավունք ունեն մասնակցելու, վարչության մարմինների բոլոր նիստերին, ինչպես հանրապետության, նույնպես և «Ավտոդոր» ընկերության տեղական կազմակերպությունների վրճռողական ձայնի իրավունքով:

§ 24· «Ավտոդոր» ընկերության խորհուրդն իր միջից նախագահություն է ընտրում, նախապես վորոշելով նրա կազմը, այնքան ժամանակամիջոցով, վորքան լիազորված է խորհուրդը, խորհրդի նախագահությունը, խորհրդի նիստերի ընդհատումների ժամանակ «Ավտոդոր» ընկերության գլխավոր ղեկավարող մարմին է հանդիսանում:

§ 25· Խորհրդի նախագահությունը,

հրավիրվում և վոչ ավելի քան ամիսը մեկ անգամ:

§ 26. Խորհրդի նախագահությանն յենթակա յեն «Ավտոդոր» ընկերության բոլոր գործերի, սարքվածքի, ձեռնարկությունների և միջոցների կառավարությունը և ընկերության բոլոր ֆունկցիաների իրագործումը, ընկերության նպատակների և խնդիրների համաձայն:

§ 27. «Ավտոդոր» ընկերության ընթացիկ գործերի վարման համար խորհուրդն ստեղծում է բաժանմունքներ, վորոնք գործում են համաձայն խորհրդի կողմից հաստատված աստանձին կանոնադրության:

5. Ընկերության բաժանումները

§ 28. Կանոնադրության 6-րդ պարագրաֆում նախատեսված «Ավտոդոր» ընկերության տեղական բաժանմունքները կազմակերպվում են ընկերության նախագահության նախաձեռնությամբ կամ նրա նվիրատվությամբ (пожертвование) յերբ այդ մասին հայտարարություն է արվում տեղական հաստատությունների, կազմակերպությունների կամ տեղական մի խումբ բնակիչների կողմից, վորոնց թիվը պիտի լինի վոչ պակաս քան 10 հոգի:

Ծանոթ.— Յերևանում, ընկերության Յերևանյան բաժանմունքի վարչության բոլոր իրավունքները և պարտականությունները, դրվում են ընկերության խորհրդի վրա, մինչև վոր վերջինի խորհրդի կողմից առանձին վորոշում չունենա այդ մասին:

§ 29. Ընկերության գերագույն պարտականությունները [illegible] բի կազմակերպման [illegible] գործունեության և նրա ձեռնարկությունների ու հաստատությունների մեջ:

Ծանոթ.— Կոլեկտիվների կազմակերպությունները կատարում է միմիայն ընկերության բաժանմունքի թույլտվությամբ:

§ 30 Ընկերության խորհրդի կողմից լիազորված անձնավորությունը բաժանմունքի անդամների ընդհանուր ժողով և հրավիրում, որը վարչություն է ընտրում մի տարի ժամանակով:

§ 31. Բաժանմունքները գործում են ընկերության խորհրդի ղեկավարությամբ:

§ 32. Ընկերության բաժանմունքի գերագույն որդանն է հանդիսանում, ընկերության տվյալ բաժանմունքի անդամների ընդհանուր ժողովը, իսկ ժողովների միջանցքում՝ վարչությունը:

§ 33. Ընկերության բաժանմունքի վարչությունը, իրագործում է ընկերության համահայաստանյան համագումարների վորոշումները և բաժանմունքի ընդհանուր ժողովի վորոշումները միաժամանակ ի կատար ածելով ընկերության խորհրդի դիրեկտիվի բնույթ կրող վորոշումները:

§ 34. Ընկերության բաժանմունքները պարտավոր են խորհրդին ներկայացնել, ընդհանուր ժողովների և վարչության նիստերի արձանագրությունները և տարեկան հաշիվները ի թիվս դրամական հաշվետվությունը, վերատուգիչ հանձնաժողովի արձանագրության և դրավոր բացատրության հետ:

§ 35. Անդամավճարներից և այլ աղբյուրներից ստացված յեկամուտը բաժանմունքները գործադրում են իրենց կարիքների վրա, ի բացառյալ այն մասի, որը պիտի ուղարկվի ընկերության խորհրդին:

§ 36. Բաժանմունքները ընկերության խորհրդի թույլտվությամբ ընկերության կնիքի նման—իրենց կնիքն

ունեն, բաժանմունքի անման փորա-
գրությամբ։

§ 37. Բաժանմունքները գործում
են սույն կանոնագրության համաձայն, այն
հրահանգների հիման, որոնք ընկերու-
թյունն է հաստատում։

6. Վերատուգիչ հանձնաժողով

§ 38. «Ավտոդոր» ընկերության
վերատուգիչ հանձնաժողովը ընտրը-
վում է ընկերության համահայաս-
տանյան համագումարի կողմից և
այն պատգամավորներից, որոնք չեն
մտնում խորհրդի կազմի մեջ և ըստ
համագումարի որոշման թվով ոչ
պակաս քան 3 հոգի և 2 թեկնածու։

§ 39. Վերատուգիչ հանձնաժողովը
վերատուգման է յենթարկում ընկեր-
ության բոլոր մարմինները, հաս-
տատությունները, ձեռնարկություն-
ները և կազմակերպությունները և
նրանց գործունեությունը, թե ֆինան-

սական ու տնտեսական կողմից, թե
առհասարակ ինչպես են գրված աշ-
խատանքները ու ինչպես են կիրառ-
ված բարձրագույն մարմինների վար-
չությունների որոշումները։

Ծանոթ.—Վերատուգման կար-
գը մշակվում է ընկերության
խորհրդի կողմից։

§ 40. Վերատուգիչ հանձնաժողովը
իր գործունեության մասին հաշվե-
տվություն է ներկայացնում ընկեր-
ության համահայաստանյան համա-
գումարին։ Իսկ համագումարների
միջմիջոցներին, վերատուգիչ հանձ-
նաժողովը ընկերության ապարատի
աշխատանքում իր նկատած թերու-
թյունների և չարանպատակ գոր-
ծերի մասին տեղեկացնում է ընկեր-
ության խորհրդին կամ նրա նախա-
գահության, իր նկատառումներով
հանդերձ։

§ 41. Վերատուգիչ հանձնաժողովի

անդամներն իրավունք ունեն ներկա գտնվելու խորհրդի նախագահության բոլոր նիստերին, նույնպես և ընկերության տեղական կազմակերպությունները խորհրդատու ձայնով:

§ 42. ՀՍԽՀ-ի «Ավտոդոր» ընկերության լիկվիդացիան կարող է տեղի ունենալ ՀՍԽՀ-ի կառավարության կարգադրությամբ կամ ընկերության համահայաստանյան համագումարի վորոշմամբ, վորը պիտի բաղկացած լինի ընկերության անդամների 2/3 մասից:

Ծանոթ.— Ընկերության տեղական կազմակերպությունները կարող են լիկվիդացիայի յենթարկվել կառավարական որգանների կարգադրությամբ, ընկերության խորհրդի և ընկերության ընդհանուր ժողովների վորոշմամբ, համաձայնված ընկերության խորհրդի հետ:

§ 43. Ընկերության գույքի լիկվիդացիան կատարվում է կառավարական մարմինների կամ ընկերության համագումարի կողմից նշանակված լիկվիդացիոն հանձնաժողովի միջոցով:

§ 44. «Ավտոդոր» ընկերության լիկվիդացիայի դեպքում նրա բոլոր պարտքերը վճարելուց մնացած ստացված քը, անցնում է ՀՍԽՀ-ի կառավարության: Ընկերության տեղական կազմակերպությունների լիկվիդացիայի դեպքում, նրանց ստացվածքը անցնում է ի տնօրինություն ընկերության բարձրագույն կազմակերպություններին:

Իսկական հետ՝ ճիշտ է՝

Ընկերության Խորհրդի նախագահի տեղակալ՝ Գ. ԳԱՐԻԲՋԱՆՅԱՆ

ԳԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ

Գլավլ. 1729 (բ). Պատվ. 4681, Տիրաժ 1000.

ՀՀ Ազգային գրադարան
NL0927554

1

3158